Եպիսկոպսական ժողովի մասնակիցները

Մայր Աթոռի ներկայացուցիչները պատգամավորական համագումարում

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵՍՐ... ԼՈՒՐԵՐ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊՈՔԱ ՌԱԹՈՆ ՔԱՂԱՔՈՒՄ

(30 ապրիլ-մայիս 4)

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Նարեկ աբդ. Ավագյանը եւ Տ. Արարատ քհն. Պողոսյանը ս/թ. ապրիլի 23-ին մեկնեցին ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմ՝ մասնակցելու Պոքա Ռաթոն (Ֆլորիդա) քաղաքում ապրիլի 30-ից մայիսի 4-ը տեղի ունենալիք Հոգեւորականաց եւ Թեմական պատգամավորական 111 համագումարներին: Այս ամենամյա համագումարներին Մայր Աթոռի ներկայացուցիչների մասնակցությունը այլեւս դարձել է ավանդույթ: Այս տարի եւս Մայր Աթոռի ներկայացուցիչները մասնակցեցին նշյալ համագումարներին:

Թեմի եկեղեցականաց համագումարն (համագումարի խորագիրն էր «Քրիստոսով ապրիլ») սկսվեց ապրիլի 30-ի առավոտյան: Այն ընթացավ թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանի նախագահությամբ, որի՝ բացման խոսքից հետո Տ. Արարատ քհն. Պողոսյանն ընթերցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամն ուղղված ժողովի մասնակից եկեղեցականներին:

Այնուհետեւ համագումարը շարունակվեց Մայր Աթոռի հյուր-հոգեւորական Տ. Նարեկ աբդ. Ավագյանի «Վանականություն Հայաստանի մեջ՝ մուտքը, զարգացումը, անկումը եւ ներկա վիճակը» խորագրով թեմայի ներկայացմամբ, որի ավարտից հետո ծավալվեց քննարկում: Ապա համագումարի մասնակիցների առջեւ «Հայ Եկեղեցին՝ զորավիգ հայ պետականությանը» խորագրով հանդես եկավ մյուս հյուր-եկեղեցականը՝ Տ. Արարատ քհն. Պողոսյանը, որ զեկույցից հետո թեմի եկեղեցականների տված հարցերին տվեց գոհացուցիչ պատասխաններ:

Ժողովում քննարկվելիք նյութ էր «Ինչպե՞ս զորացնել Տիկնանց միությունները», որի շուրջ եկեղեցականները արտահայտեցին իրարամերժ տեսակետներ, սակայն ի վերջո համագումարը եկավ այն եզրակացության, որ պետք զորակցել եւ զորավիգ լինել Տիկնանց միություններին: Բուռն քննարկումից հետո «Ինչպե՞ս հասնել համալսարանական երիտասարդներին եւ ներգրավել նրանց Եկեղեցու կյանքից ներս» թեմայով հանդես եկան Տ. Վազգեն քհն. Գուզոյանը եւ Տ. Հովնան քհն. Տեմերճյանը: Ապա համագումարի մասնակիցներին Տ. Դանիել վրդ. Ֆընտըզյանը ներկայացրեց պատրաստվելիք սարկավագաց նոր ձեռնարկը: Համագումարի առաջին օրն ավարտվեց Խաղաղական ժամեր-

գությամբ: Հաջորդ օրը՝ մայիսի 1-ին եկեղեցականները մասնակցեցին Ս. Պատարագին, ապա սկսվեց համագումարի երկրորդ օրը: Եկեղեցական Համագումարի վերջին օրը զեկույցներով հանդես եկան Լոռու Ան Մաթոսյանը եւ Թոմաս Կարապետյանը, ապա ներկաներին իր պատգամը փոխանցեց թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Եկեղեցականների Համագումարի ավարտից հետո մայիսի 2-4-ը տեղի ունեցավ Թեմական պատգամավորական համագումարը: Նախ մինչեւ համագումարի սկսվելն օրվա առաջին մասում եկեղեցականները Տիկնանց միության ներկայացուցիչների հետ մասնակցեցին Տիկնանց միության տարեկան ժողովին, որտեղ փոռեցին միասնաբար գտնել Տիկնանց միությունների աշխատանքները խոչընդոտող հարցերի պատասխանները: Ապա սկսվեց Թեմական Պատգամավորական համագումարը: Հյուր-եկեղեցական Տ. Նարեկ աբդ. Ավագյանը ներկաներին փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը: Թեմական պատգամավորական համագումարի եռօրյա ընթացքում քննարկվեցին թեմին հուզող բազմաթիվ հարցեր, որոնց թվում նաեւ թեմի նոր կանոնադրության հաստատման հարցը, որը քվեարկության դրվելուց հետո արժանացավ ներկաների զգալի մեծամասնության հավանությանը: Ապա ներկաների առջեւ հանդես եկան թեմական ներքին միություններն ու կազմակերպություններն իրենց հաշվետու զեկույցներով: Համագումարն ավարտվեց փակման աղոթքով եւ բոլոր մասնակիցները վերադարձան իրենց համայնքներ:

Համագումարի ավարտից հետո Մայր Աթոռի ներկայացուցիչներ Տ. Նարեկ աբդ. Ավագյանը եւ Տ. Արարատ քհն. Պողոսյանը մեկնեցին թեմի տարբեր ծուխեր եւ համայնքներ՝ ի մոտո ծանոթանալու թեմի համայնքների հոգեւոր-եկեղեցական ներքին կյանքին:

Տ. Նարեկ աբդ. Ավագյանը եւ Տ. Արարատ քհն. Պողոսյանը շուրջ մեկամսյա բացակայությունից հետո մայիսի 23-ին վերադարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանի գլխավորությամբ մի խումբ միաբաններ՝ Գուգարաց թեմի Սպիտակի հոգեւոր հովիվ Տ. Ավետիք աբդ. Սողոմոնյանը, ՀԵԵՄ հոգեւոր պատասխանատու Տ. Եղիշե վրդ. Ավետիսյանը եւ Տ. Իսահակ վրդ. Պողոսյանը սույն թվականի ապրիլի 28-ից մայիսի 5-ը մասնակցեցին Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց հայոց եկեղեցու Սուրբ Զատկական արարողություններին:

Ավագ երեքշաբթի Տ. Եղիշե վրդ. Ավետիսյանը պատարագ մատուցեց Ս. Հովհաննես Ավետարանչի եկեղեցում՝ Ս. Հարության գավթում, որից հետո աշխարհասփյուռ համայնքներից եկած հայ ուխտավոր հավատացյալները թափորով ուղեւորվեցին Ս. Սիոն՝ Սրբոց Հակոբյանց եկեղեցի:

Ավագ չորեքշաբթի եւ ավագ հինգշաբթի Ս. Աստվածամայր եկեղեցում պատարագ մատուցեցին Տ. Ավետիք աբդ. Սողոմոնյանը եւ Տ. Եղիշե վրդ. Ավետիսյանը:

Ավագ հինգշաբթի առավոտյան կատարվեց ժամերգություն եւ Ապաշխարության կարգ: Ապա հանդիսավոր Ս. Պատարագ՝ Կանադայի թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանի մատուցմամբ:

Կեսօրին տեղի ունեցավ Ոտնլվայի կարգ՝ հանդիսապետությամբ Երուսաղեմի Հայոց ընտրյալ պատրիարք Տ. Նուրհան արքեպ. Մանուկյանի:

Երեկոյան Երուսաղեմի զինվորյալ միաբանությունը եւ ուխտավոր աշխարհական բազմությունը եկեղեցական արարողությամբ եւ թափորով ուխտերթ կատարեց դեպի Քրիստոսի առաջին բանտ՝ Հայոց Ս. Հրեշտակապետաց եկեղեցի, որի մոտ գտնվող՝ Քրիստոսի չարչարանքի ծառի դիմաց կատարվեց օրհնության կարգ: Եկեղեցական թափորը ուղեւորվեց Քրիստոսի երկրորդ բանտ:

Երեկոյան Ս. Հակոբ եկեղեցում տեղի ունեցավ Խավարման կարգը:

Ավագ ուրբաթ կեսօրին կատարվեց Խաչելության, իսկ երեկոյան Թաղման կարգը՝ հանդիսապետությամբ Երուսաղեմի Հայոց ընտրյալ պատրիարք Տ. Նուրհան արքեպ. Մանուկյանի:

Ավագ շաբաթ, առավոտյան Ս. Հակոբ եկեղեցուց եկեղեցական ողջ դասը ուխտավոր հավատացյալների հետ թափոր կազմած հարության հոգեւոր երգերով ուղեւորվեցին Ս. Հարություն եկեղեցի, ուր Ավագ Թարգմանը բացեց Ս. Հարության Տաճարի դուռը: Այնուհետեւ Երուսաղեմի Ամենապատիվ պատրիարք Տ. Նուրհան արքեպ. Մանուկյանի հանդիսապետությամբ հայոց Գողգոթայում դիմավորեցին Տաճարի Հարության մատուռից բերված կրակը, որով առաջինը ավետվեց Քրիստոսի հրաշափառ հարությունը: Այնուհետեւ եկեղեցական դասը հավատացյալ ուխտավորների շքերթը հանդիսավորապես հարության երգերով մուտք գործեց Ս. Սիոնի բակ, ուր թմբկահարների մասնակցությամբ տեղի ունեցավ տոնական ազգային ներկայացում:

Կեսօրին Հայոց Գողգոթայում պատարագ մատուցեց Տ. Իսահակ վրդ. Պողոսյանը:

Երեկոյան Հայոց Ս. Հակոբ եկեղեցում տեղի ունեցավ ճրագալույցի արարողություն՝ հանդիսապետությամբ լուսարարապետ Տ. Սեւան արքեպ. Ղարիբյանի, եւ ապա Ս. Պատարագ՝ Տ. Ավետիք աբդ. Սողոմոնյանի մատուցմամբ:

Ավագ կիրակի առավոտյան (կեսգիշերից հետո) թափորով եկեղեցականներն ու ուխտավոր հավատացյալները մուտք գործեցին Ս. Հարություն եկեղեցի, ուր տեղի ունեցավ ժամերգություն, ապա Ջատկական հանդիսավոր Ս. Պատարագ Քրիստոսի Ս. Գերեզմանի վրա՝ Մայր Աթոռոս Սուրբ Էջմիածնի դիվանապետ, գերաշնորհ Տ. Արշակ եպս. Խաչատրյանի մատուցմամբ: Սրբազան Հայրը Ս. Պատարագի քարոզի մեջ Վեհափառ Հայրապետի շնորհավորանքներն ու բարեմաղթանքները փոխանցեց նորընտիր պատրիարք Տ. Նուրհան արքեպ. Մանուկյանին՝ մաղթելով եկեղեցաշեն գործունեություն պատրիարք հոր գահակալության ընթացքում՝ ի պայծառություն Երուսաղեմի Հայոց Պատրիարքության:

Տ. ԵՂԻՇԵ ՎՐԴ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԹԵՄ

Մայիսի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացեալ Նահանգների Հայոց Արեւելյան թեմ՝ հրավերով թեմական առաջնորդ Տ. Խաժակ արքեպ. Պարսամյանի եւ թեմական խորհրդի:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա թեմական-վարչական կառույցների ներկայացուցիչների եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՕՐՎԱՆ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻՆ ԵՒ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Մայիսի 9-ին Վիրահայոց թեմում մեկնարկեցին Համբարձման տոնին, Հայրենական պատերազմի հաղթանակին եւ Շուշիի ազատագրմանը նվիրված տոնական միջոցառումները:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մայիսի 9-ին նշեց Համբարձման տոնը: Այդ օրը Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում առավոտյան ժամերգությունից հետո մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ընթացքում պատարագիչ քահանան՝ Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սամվել Թորոսյանը քարոզխոսքում մեկնաբանեց օրվա խորհուրդը:

Քրիստոսի Համբարձման տոնը, որ ուղեկցվում է ժողովրդական հանդիսություններով եւ կոչվում է Ջանգյուլում, շարունակվեց եկեղեցու բակում: Տոնահանդեսը Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպել էր կենտրոնի երիտասարդաց սիրողական «Տարոն» երգի-պարի խումբը՝ պարուսույց Նարինե Ղուշչյանի գլխավորությամբ:

Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում հավաքվել էին ծաղկեպսակներով զուգված աղջիկներ ու հարսներ, երիտասարդներ ու բազմաթիվ հավատացյալներ: Եկեղեցու լուսարարապետ Տեր Մանուկ քհն. Ջեյնալյանը խոսեց օրվա խորհրդի մասին եւ բոլոր Համբարձումներին շնորհավորեց իրենց անվանակոչության տոնի առթիվ: «Համբարձում յայլա» մեղմանուշ երգի մեղեդու ներքո սկսվեց ժողովրդական տոնահանդեսը, որին իրենց մասնակցությունն էին բերել «Հայարտուն» կենտրոնի «Տարոն» երիտասարդաց երգի-պարի խումբը, «Ջեյրան», «Անի» եւ «Վանք» պարային համույթները, մենակատարներ Անի Ղուշչյանը, Ռուբեն Ոսկանյանը եւ Հովհաննես Շահնազարյանը:

Կենդանի ծաղիկներ էին դարձել «Հայարտուն» կենտրոնի «Սուրբ Մովսես Խորենացու» անվան նախակրթարանի սաները, որ տոնահանդեսին առանձին գեղեցկություն հաղորդեցին իրենց փայլուն արտասանություններով եւ նազելի պարով: Բացելով ժո-

ղովրդական տոնահանդեսը՝ Թբիլիսիի թիվ 104 դպրոցի աշակերտուհի Լիզա Թորոսյանի ներկայացմամբ փարածվում էր հայկական ժողովրդական երգն ու պարը ու բոլորին հրավիրում Համբարձման տոնահանդեսի, որը լինելով հայ ժողովրդի ավանդական տոներից մեկը՝ նաեւ պես-պես ծաղիկների տոն է, գարնանային գեղեցկության զարթոնք:

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին եւ Շուշիի ազատագրմանն էր նվիրված մայիսի 9-ին Վրաստանի հայ նկարիչների միության նախաձեռնությամբ եւ Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդության հովանավորությամբ Ախալքալակի գեղարվեստի դպրոցում կազմակերպված Հայոց Մեծ Եղեռնի 98-րդ տարելիցի առթիվ «Հայոց Գողգոթա» ցուցահանդեսը, որի բացման արարողությանն իրենց ներկայությունն էին բերել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը, Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բարգէն աբդ. Սալբիյանը, Վրացական Ուղղափառ Եկեղեցու Ախալքալակի միտրոպոլիտ Նիկոլոզը, Ախալքալակի շրջանային վարչության նախագահ Նաիրի Իրիցյանը եւ այլք:

Ցուցահանդեսը բացեց եւ Շուշիի ազատագրման ու Մեծ Հաղթանակի տոների կապակցությամբ ներկաներին շնորհավորեց Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը: Օրհնության խոսքով հանդես եկավ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բարգէն աբդ. Սալբիյանը:

Ցուցահանդեսի բացումը ողջունեցին Ախալքալակի սակրեբուլոյի նախագահ Համլետ Մովսիսյանը, Ջավախքի երիտասարդ նկարիչների ընկերակցության ղեկավար Հայկազուն Ղարագուլյանը, նկարչական դպրոցի տնօրեն Կառլեն Կարապետյանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեորգ Սնիչյանը:

Օրհնության եւ գնահատանքի իր խոսքում Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման օրվա, Մեծ Հայրենականի հաղթական ավարտի եւ Շուշիի ազատագրության կապակցությամբ ներկաներին շնորհավորեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը: Միջոցառումն ավարտվեց երիտասարդական կենտրոնի սաների ուժերով տրված համերգով:

Նույն օրը երեկոյան Ախալցիխեի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանի հանդիսապետությամբ, Ախալցիխեի եւ մերձակա շրջանների հայության հոգեւոր տեսուչ Տ. Հակոբ աբեղա Սահակյանի գլխավորությամբ կատարվեց երեկոյան ժամերգություն եւ Անդաստանի արարողություն: Հիսուս Քրիստոսի համբարձման տոնի հանդիսությանը ներկա էին տեղական իշխանության ներկայացուցիչները եւ ժողովրդի հոծ բազմություն: Եկեղեցու բակում Շուշիի ազատագրման եւ Համբարձման տոների առթիվ տեղի ունեցավ ազգագրական երգերի ու պարերի համերգ, որը կազմակերպել էր Ախալցիխեի Հայկական երիտասարդական կրթամշակութային կենտրոնը:

Միջոցառման ավարտին ներկաներին բաշխելով իր օրհնությունը՝ Վիրահայոց թեմի առաջնորդը շնորհավորեց Շուշիի ազատագրման եւ Հայրենական պատերազմի հաղթանակի կապակցությամբ:

Այնուհետեւ թեմական առաջնորդը ուղեկիցների հետ միասին այցելեց Ախալցիխեի Վահրամ Գայֆեճյան ստեղծագործողների միություն, որտեղ կայացավ հանդիպում արվեստի հայ գործիչների, մտավորականության եւ տեղի համայնքային ներկայացուցիչների հետ:

Տոնական մթնոլորտը Ախալցիխեում շարունակվեց մինչեւ ուշ երեկո:

Համբարձման տոնը Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում նշանավորվեց հոգեւոր հովիվ Տեր Արարատ քհն. Գումբալյանի գլխավորությամբ մատուցած Ս. Պատարագով: Այնուհետեւ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի եւ Շուշիի ազատագրման կապակցությամբ Բաթումիում բնակվող վետերաններին հայ համայնքի կողմից բաժանվեցին տոնական նվերներ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ

«ԱՍՊԵՏ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ» ՏԻՏՂՈՍ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆ՝ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՆԱԶԱՐ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայոց Արեւելյան թեմ կատարած հայրապետական այցի ընթացքում՝ մայիսի 10-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կազմակերպած՝ ՀԲԸՄ հոգաբարձուների խորհրդի անդամ, ազգային բարերար տիար Նազար Նազարյանի մեծարման հանդիսությանը:

Հանդիսության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց տիար Նազարյանին եւ նրան շնորհեց «Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոս եւ հայրապետական շքանշան՝ ի գնահատություն Աստվածկառույց Սուրբ Էջմիածնի հավետ պայծառությանը որդիական սիրով ու նախանձախնդրությամբ բերած բացառիկ ավանդի ու աստվածահաճո ծառայությունների: «Մենք այսօր եկել ենք Ձեզ հետ միասին գոհաբանություն բարձրացնելու առ Աստված, որ ազգիս պարգեւում է այսպիսի արժանավոր զավակներ, որոնք ապրում են իրենց կյանքը նվիրումով. նվիրումով երեք հիմնական արժեքների՝ ընտանիք, Հայրենիք եւ Եկեղեցի: Նազար եւ Արտեմիս Նազարյանների կյանքը բնորոշվում է այս երեք արժեքների ընդգրկումի մեջ. ընտանեսիրություն, հայրենասիրություն եւ եկեղեցանվիրում: ...Բարի գործը, ավետարանի խոսքի համաձայն, նման է ցորենի հատիկի, որ ընկնելով հողի մեջ՝ չի կորչում, չի վերանում, չի անհետանում, այլ բազմապատիկ պտղաբերում է: ...Մենք այսօր տեսնում ենք մեր ազգի արժանավոր զավակների բարեգործությունների բազմապատիկ արդյունքները, որ է շեն ու ծաղկող ազգային կյանք Սփյուռքի մեջ, ազատ ու անկախ հայրենի երկիր եւ պայծառացյալ Եկեղեցի: Հայցում ենք, որ Տերը միշտ վառ պահի Ձեր հոգիներում ընտանեսիրությունը,

հայրենասիրությունը եւ եկեղեցանվիրումի զգացումը, որոնցով պիտի շարունակի հարատեւել մեր ժողովուրդը դեպի իր կյանքի նոր հորիզոններ, դեպի նոր հազարամյակներ իր կյանքի», - օրհնության ու գնահատանքի իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

Տիար Նազար Նազարյանն իր սրտաբուխ նվիրատվություններով շարունակ նպաստել է Սփյուռքի համայնքային, կրթական-ընկերային ծրագրերին, միշտ եղել է հայապահպանության ջատագովն ու քարոզիչը: 1962 թ. ի վեր Լիբանանում գործում է Նազարյան դպրոցը, կառուցվել են սրահներ Բուենոս Այրեսի ՀԲԸՄ կենտրոնի, Կալիֆորնիայի ՀԲԸՄ Մանուկյան-Դեմիրճյան դպրոցի, Նյու Յորքի «Նուբար» ճամբարի համար: Նազարյան ընտանիքը կարեւոր իր նպաստն է բերել Նյու Ջերսիի Ս. Թովմաս եկեղեցու կառուցմանը, հաստատել է հատուկ հիմնադրամ, որը կրթաթոշակներ է ապահովում բարձրագույն ուսում ստացող հայ ուսանողների համար, աջակցել է Սփյուռքի տարբեր ազգապահպան ծրագրերի իրագործմանը:

1988 թ. սոսկալի երկրաշարժի օրերից սկսյալ Նազարյան ընտանիքը սատար կանգնեց նաեւ Հայրենիքին՝ հատկապես ՀԲԸՄ կողմից իրագործվող բազմաթիվ ծրագրերի միջոցով զորակցելով նորանկախ Հայաստանի առաջընթացին, շինությանն ու պայծառությանը: Կարեւոր իրագործումներից էր Լիբանանում ՀՀ դեսպանատան համար շենքի կառուցումը եւ ընծայումը Հայրենիքին, Ջեֆերսոնի անվան գերձայնային հետազոտությունների եւ կրթության ինստիտուտի հետ համատեղ ստեղծված գերձայնային հետազոտությունների կենտրոնի եւ Երեւանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ճառագայթային ախտորոշման եւ բուժման ՀԲԸՄ-ԵՊԲՀ «Լեւոն եւ Կլառդիա Նազարյան» ռադիոլոգիայի կենտրոնի հիմնումը: Նազարյան բարերարների հովանավորությամբ Երեւանում այժմ կառուցվում է ՀԲԸՄ հայաստանյան նոր գրասենյակը:

Ազգասեր ու եկեղեցաշեն բարերարները մշտապես սատարել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Հայոց Եկեղեցուն: Նազար եւ Արտեմիս Նազարյանների ազնիվ բարերարությամբ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով կառուցվեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու Ս. Տրդատ մատուռը: Նազարյան ընտանիքի առատաձեռն ընծայաբերումներով Մայր Աթոռում 2002 թ. հիմնանորոգվեց Ղազարապատի սարկավագների թաղը եւ միաբանական սեղանատունը, իսկ 2008 թ. կառուցվեց Դիվանատան շենքը: Հավատավոր Նազարյան ամուսիններն այսօր էլ շարունակում են զորավիգ լինել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրթական, ընկերային ու հայապահպան առաքելությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑ ԱԲՈՎՅԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայիսի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի եւ Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, տեղի ունեցավ Աբովյանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցին, որի հիմնարկեքը կատարվել էր 2006 օգոստոսի 24-ին, կառուցվել է տիար Գագիկ Ծառուկյանի բարերարությամբ:

Եկեղեցու օծմանը մասնակցում էին բազում հրավիրյալներ՝ Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, ՀՀ ԱԺ ներկայացուցիչներ, ՀՀ կառավարության անդամներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Համայն Ռուսիոց Պատրիարքի առաջնորդական փոխանորդ, Վոսկրեսենսկի եպիսկոպոս Սավվայի գլխավորած պատվիրակությունը, Անդրկովկասում Պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արքեպ. Սոլչինսկին, ԵՀԽ Բոսեի էկումենիկ դպրոցի տնօրեն Հայր Իուան Սաուկան (Ռումին Ուղղափառ Եկեղեցի):

Նորակառույց եկեղեցու առջեւ Նորին Սրբությանը դիմավորեցին թեմական առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը եւ թեմի հոգեւոր դասը, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները եւ եկեղեցու բարերար Գագիկ Ծառուկյանը: Ողջույնի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցականների թափորով, օրհնելով հավաքված ժողովրդին, առաջնորդվեց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, ուր սկսվեց տաճարի օծման հանդիսավոր կարգը:

Սաղմոսերգությանը, աղոթքներին ու շարականներին հաջորդեց օծումը, երբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, որով եւ Նորին Սրբությունն օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը: Արարողությանը մասնակից Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպ. Զաքարյանը, ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպ. Պարսամյանը, ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպ. Տերտերյանը, Տավուշի թեմի առաջնորդ Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպ. Կճոյանը, Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ, Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպ. Հովհաննիսյանը, Վայոց ձորի թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպս. Մովսիսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Աշոտ եպս. Մնացականյանը, Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս. Նալբանդյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան եպս. Հակոբյանն օծեցին եկեղեցու մկրտության ավազանը եւ բոլոր այուները:

Աբովյանի Ս. Հովհաննես եկեղեցին

Ս. Սեղանի օծումը

Հավարտ արարողության Ամենայն Հայոց Հայրապետը ներկա ժողովրդին բերեց հայրական իր պատգամն ու օրհնությունը. «...Յոթ տարիներ առաջ Երկնավորի բարեհաճ կամքով Արովյան քաղաքի բազմաթիվ հավատավոր Մեր զավակների աղոթական ներկայությամբ կատարեցինք տիար Գագիկ Ծառուկյանի բարերարությամբ կառուցվող սրբազան այս աղոթավայրի հիմնարկեքի արարողությունը: Մեռոնադրոշմ օծմամբ դրվեցին հիմքերը եկեղեցու, որը շինարարության ընթացքում բարերարի խանդավառ նախաձեռնությամբ ավելի ընդարձակվեց ու ճոխացավ: Այսօր այս բարձունքի վրա շքեղակառույց հառնել է նորակերտ եկեղեցին՝ ի սպասավորություն Արովյանի եւ շրջակայքի հավատավոր Մեր ժողովրդի:

Եկեղեցու մասին խոսելով՝ առաքյալն ասում է. «Ամբողջ կառույցը Տիրոջով վերաճում է մի սուրբ տաճարի, որի մեջ դուք էլ նրա հետ կառուցվում եք որպես բնակարան Աստծու՝ Սուրբ Հոգու միջոցով»: Հավատացելոց համար եկեղեցական կառույցը ճարտարապետական կոթողից առավել Աստծո տունն է, որտեղ երկնառաք օրհնությունն ու շնորհիներն են բաշխվում հավատացյալներին՝ նրանց դարձնելով տաճար Սուրբ Հոգու: Եկեղեցին ճշմարիտ հավատն է, որ միաբանում է մեզ Աստծո Որդու ճանաչողության շնորհի մեջ, ինչպես վկայում է Սուրբ Սահակ Պարթեւ Կաթողիկոսը: Եկեղեցու նվիրական, սրբագործող հարկի ներքո աստվածպաշտական արարողությունները, Քրիստոսի կենսատու Ավետարանի քարոզությունը հավատացելոց հաղորդակից են դարձնում Բարձրյալին, զորացնում հավատով, կրթում ու դաստիարակում տերունական պատգամներով, ոգեշնչում քաջ ու բարի գործերի, ճշմարիտ ու արդար ընթացքի, եւ պարգեւում հույսն ու զորությունը՝ վերազարթոնքի եւ լուսավոր գալիքի: Դարերի հոլովույթում մեր ժողովուրդն անցել է բազում նեղությունների ու տառապանքների, ջարդերի ու կոտորածների միջով, սակայն երբեք չի վհատվել եւ հույսով, հավատքով ու աղոթքով հաղթականորեն վեր է հառնել ամեն փորձությունից՝ ամենուր եկեղեցի ու դպրոց կառուցելով, կազմակերպելով ազգային-եկեղեցական իր կյանքը: Ինչպիսին էլ եղել են ժամանակները՝ անգամ օտարների տիրապետության ծանր լծի ներքո, փորձությունների ու նեղությունների մեջ չի սասանվել եկեղեցի կառուցելու նախանձախնդրությունը մեր ժողովրդի, քանզի թեեւ թշնամյաց կողմից ավերվել են մեր աղոթավայրերը, ոտնակոխ արվել մեր սրբավայրերը, սակայն միշտ կանգուն ու անսասան, անառիկ ու անկործանելի է մնացել մեր հոգու տաճարը, ուր անլռելի հնչել է փառաբանությունը Բարձրյալն Աստծո: Եկեղեցին Աստծո պարգեւն է, որ Բարձրյալը շնորհում է հավատավոր ժողովրդին՝ մարդկանց միջոցով: Նրա հիմքերը դրված են անսասան վեմի հաստատության վրա. ոչ մարդիկ կարող են այն շարժել, եւ ոչ հրեշտակները՝ սասանել, - ասում է Սուրբ Եղիշե պատմիչը: Մեր պատմության մեջ շարունակական եկեղեցաշինությունը վկայությունն է մեր ժողովրդի հոգեւոր տաճարի ամրության, նրա ստեղծարար, աննկուն ոգու՝ հիմնված առ Քրիստոս զորեղ հավատքի վրա, որով հարատեւ պիտի ապրի մեր ժողովուրդը եւ առաջնորդվի դեպի փրկություն, որ Տիրոջից շնորհված է Եկեղեցու միջոցով:

Սիրելի հավատավոր զավակներ, նորակառույց Սուրբ Հովհաննես եկեղեցին մեզ հրավիրում է աղոթքի եւ Բարձրյալին փառաբանության՝ պատմելով մեր պատմութ-

յան եւ մեր Սուրբ Հայրերի մասին, հիշեցնելով մեր անցյալը, մեր նախնյաց ավանդները, ձեռքբերումները, որոնցով պարտավոր ենք արժեւորել մեր ներկան եւ կերտել գալիքը: Այստեղ են պատկերները Սուրբ Մեսրոպ Մաշտոցի եւ Սուրբ Սահակ Պարթեւի, նրանց աշակերտների, Հայ Եկեղեցու մեծ վարդապետների, երախտարժան գործիչների, ովքեր նախանձախնդիր ջանքերով խնամել ու հոգացել են, որ միշտ վառ մնա հայոց հավատքի ջահը, զորացնելով հոգեւոր կենսական ուժերը մեր ժողովրդի, որպեսզի ազգս հայոց պայծառացնի իր կյանքն ու հայրենիքը՝ անվարան հետեւելով մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ կենարար լույսն է աշխարհի (Յովհ. Ը. 12)...», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով ժողովրդին բարեպաշտ ներկայությամբ, ջերմագին աղոթքով նորակառույց եկեղեցին դարձնել հավատքի պայծառությամբ լեցուն Աստծո տուն:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի եւ Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, ինչպես նաեւ պատվավոր հյուրերի, Քույր եկեղեցիների եւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների ներկայությունը հոգեպարար այս արարողությանը՝ մաղթելով, որ Բարձրյալի օրհնությամբ նորանոր ձեռքբերումներով արդյունավորվեն եղբայրական կապերը եւ փոխհամագործակցությունը եկեղեցիների եւ պետությունների՝ ի խնդիր մարդկության խաղաղ, բարօր ու առաջընթաց կյանքի:

Նորին Սրբությունը նաեւ իր բարձր գնահատանքն ու օրհնությունը բերեց եկեղեցու բարերարին ու նրա ընտանիքին՝ հայցելով Սուրբ Հովհաննես Մկրտչի պահպանությունը նրանց ընտանիքին եւ բոլոր այն անձանց, որոնց ջանքերով հնարավոր եղավ Սուրբ Հովհաննես եկեղեցու կառուցումը:

Այս առիթով հայրապետական իր գնահատանքը հայտնելով թեմի հոգեւոր դասին՝ Վեհափառ Հայրապետը երկարամյա զովարժան գործունեության համար Առաքել Սրբազանին շնորհեց արքության պատիվ՝ մաղթելով նրան անենվազ եռանդ եւ նորանոր հաջողություններ առաջնորդական պատասխանատու առաքելության մեջ:

Վերջում նորակառույց եկեղեցուն Ամենայն Հայոց Կաթողիկոսը փոխանցեց Ս. Հովհաննես Մկրտչի՝ Մայր Աթոռից բերված մասունքը: Նախորդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հատուկ արարողությամբ մասանց պահարանում պահվող Ս. Հովհաննես Մկրտչի մասունքն ամփոփող մասունքարանից հանվեց սրբի ոսկորից մի փոքր հատված եւ սաղմոսների ու շարականների երգեցողության ներքո, ներկայությամբ եկեղեցու բարերարի ընտանիքի, զետեղվեց նորակառույց եկեղեցու համար պատրաստված խաչ-մասունքարանի մեջ:

Արարողությունն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով: Մասունքակիր գեղեցկազարդ խաչով օրհնելով արարողության մասնակիցներին՝ Նորին Սրբությունը մաղթեց, որ Սուրբ Հովհաննես Մկրտչի բարեխոսությունը առ մեր Տերը օգնական լինի համայն հայ ժողովրդին, հաստատի արդար ու բարի գործերի մեջ եւ պարգեւի շնորհը՝ մշտապես հավատարիմ մնալու հայրերի սուրբ հավատքին ու ավանդներին:

Օծման արարողությունից հետո եկեղեցում մատուցվեց առաջին Ս. Պատարագը: Պատարագիչն էր թեմական առաջնորդ Տ. Առաքել արքեպ. Քարամյանը:

50 մետր բարձրություն ունեցող շքեղակառույց փաճարի ճարտարապետը Արտակ Ղուլյանն է, նախագծի կոնստրուկտորները՝ Հովհաննես Մելրոյանը եւ Տիգրան Դադայանը: Որմնանկարների հեղինակներն են հայր եւ որդի Աբրահամ ու Հայկ Ազարյանները: Եկեղեցու քանդակազարդման աշխատանքներին մասնակցել է շուրջ 40 քանդակագործ եւ զարդագործ-վարպետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍ ԵՒ ՌՈՒՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Մայիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Համայն Ռուսիոց Պատրիարքի՝ Մոսկվայի թեմի պատրիարքական տեղապահ, Նովոսպասյան հայրապետական վանքի վանահայր Վոսկրեսենսկի եպիսկոպոս Սավվային եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բոսեի էկումենիկ դպրոցի տնօրեն Հայր Իռաան Սաուկային (Ռումին Ուղղափառ Եկեղեցի), ովքեր Հայաստան էին ժամանել Աբովյանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման առիթով:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով Քույր եկեղեցիների ներկայացուցիչներին, ուրախություն հայտնեց համայն հայության հոգեւոր կենտրոն նրանց այցի առիթով: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ Հայ Եկեղեցու հարաբերությունները Ռուս եւ Ռումին Ուղղափառ եկեղեցիների, ինչպես նաեւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կառույցների հետ հատկանշվում են յուրահատուկ ջերմությամբ եւ գործակցության ոգով:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Ռուսաստանի Դաշնությունում եւ Ռումինիայում հազարամյակների պատմություն ունեցող հայ համայնքների ազգային-մշակութային կյանքին, ընդգծվեց հայորդիների կարեւոր ներդրումը Ռուսաստանի եւ Ռումինիայի կյանքում:

Նորին Սրբությունը նաեւ անդրադարձավ եկեղեցաշինությանը, հոգեւորականների պատրաստման անհրաժեշտությանը, հայ ժողովրդի հոգեւոր կյանքի ու հավատքի, ազգային սրբությունների ու արժեքների նկատմամբ ունեցած հավատարմությանը:

Նորին Սրբազնություն Սավվա եպիսկոպոսը, իր հերթին շնորհակալություն հայտնելով Մայր Աթոռի ջերմ ընդունելության համար, Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Կիրիլ Ա. Պատրիարքի ողջույններն ու բարեմաղթանքները: Եպիսկոպոսն իր ջերմ գրավորությունները կիսեց Սեւանի Վազգենյան դպրանոց կատարած այցելությունից: Բոսեի էկումենիկ դպրոցի տնօրեն Հայր Իռաան

Սաուկան եւս իր ուրախությունն արտահայտեց Հայաստան այցի առիթով՝ նշելով, որ Բոսեի էկումենիկ դպրոցը պատրաստ է շարունակել հյուրընկալել հայ եկեղեցականներին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն եւ Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը եւ Ծիսահայեցակարգային գրասենյակի պատասխանատու Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյանը:

Նույն օրը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բոսեի էկումենիկ դպրոցի տնօրեն Հայր Իուան Սաուկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանում հանդես եկավ «Էկումենիզմ եւ ուղղափառություն» թեմայով դասախոսությամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Մայիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարում ապահովող ծառայության աշխատակիցներին եւ այլ երկրների համանուն ծառայությունների ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ Հայաստանի գլխավոր հարկադիր կատարող, արդարադատության գեներալ-մայոր Միհրան Պողոսյանի:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն իր շնորհավորանքն ու բարեմաղթանքներն ուղղեց Հայաստանի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցներին՝ ծառայության հաստատման 15-ամյակի կապակցությամբ: Նորին Սրբությունը ողջունեց նաեւ տոնական միջոցառումների առիթով Հայաստան ժամանած այլ երկրների պատվիրակությունների ներկայացուցիչներին՝ գոհունակություն հայտնելով երկրների հարկադիր կատարման կառույցների միջեւ ձեւավորված համագործակցության համար: Նորին Սրբությունը կարեւորեց ծառայության առաքելությունը՝ երկրում օրինականության հաստատման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը զրույցի մեջ անդրադարձավ նաեւ Հայ Եկեղեցու պատմական առաքելությանը ժողովրդի կյանքում, հասարակության մեջ քրիստոնեական արժեքների առավել ամրապնդման անհրաժեշտությանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՈՒ ՀՀ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ «ՆԱԳԳԱՇՅԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՏՈՒՆ»

Մայիսի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայաստանի Հանրապետության առաջին տիկին Ռիտա Սարգսյանն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Նագգաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոն՝ ուղեկցությամբ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպ. Տերտերյանի, Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ Տ. Նաթան արքեպ. Հովհաննիսյանի եւ ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

Հայ Եկեղեցու ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի հայկական բարեգործական «Մեր Հույս» կազմակերպության եւ անհատ բարերարների աջակցությամբ գործող կենտրոնում այժմ ապրում են սոցիալապես անապահով ընտանիքների 13-16 տարեկան 15 պատանիներ եւ ստանում են մասնագիտական կողմնորոշում ու ընկերային աջակցություն:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը եւ Հայաստանի առաջին տիկինը, ուղեկցությամբ կենտրոնի տնօրեն Միհրան Միրիջանյանի, շրջեցին կենտրոնում, ծանոթացան երեխաների համար ստեղծված պայմաններին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ տիկին Ռիտա Սարգսյանը հանդիպեցին կենտրոնի փոքրիկ բնակիչների հետ, որոնք ներկայացրեցին իրենց առօրյան եւ ծրագրերը: Մտերմիկ զրույցից հետո պատանիները հանդես եկան գեղարվեստական հայտագրով՝ կատարելով ազգային ու հոգեւոր երգեր եւ ամփոփելով իրենց հեղինակած բանաստեղծությունները:

Շնորհակալություն հայտնելով ՀՀ առաջին տիկնոջը «Նագգաշյան մանուկների տուն» այցելելու համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ սպասված հանդիպումը մեծ ուրախություն պատճառեց երեխաներին եւ իրենց հանդեպ տիկին Սարգսյանի դրսեւորած սերն ու հոգատարությունը մշտապես պիտի կրեն իրենց սրտում:

Տիկին Ռիտա Սարգսյանը կենտրոնի 15 սաներին հանձնեց նվերներ, առանձնաբար ծանոթացավ յուրաքանչյուրի հետ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայաստանի առաջին տիկինն այցելեցին կենտրոնի հարեւանությամբ գտնվող Արաբկիրի հայորդյաց տուն, որտեղ հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը ներկայացրեց Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանու ներքո գործող հայորդյաց տների գործունեությունը: Հայորդյաց տան սաները Նորին Սրբությանը եւ տիկին Ռիտա Սարգսյանին ողջունեցին ազգային պարերի կատարումներով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումների կազմակերպման հանձնախմբի ժողովը՝ նախագահությամբ հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպ. Տերտերյանի:

Ժողովին զեկույցով հանդես եկավ Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումների առաջարկություններ ներկայացնող հանձնաժողովի ատենապետ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը: Հանձնաժողովի աշխատանքների վերջնական արդյունքների հիման վրա Սրբազան Հայրը ժողովականներին ներկայացրեց թվով քսաներեք առաջարկ, որոնք վերաբերում էին ինչպես Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումների նախապատրաստման եւ իրականացման աշխատանքներին:

Ժողովի ներկայացուցիչները, հանգամանորեն քննարկելով առաջարկությունները, ամբողջացրեցին դրանք՝ ներկայացնելու Վեհափառ Հայրապետի վավերացմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՒ ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՈՐ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԻՋԵՒ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Մայիսի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի ու Համայն Ռուսիոյ Կիրիլ Ա. Պատրիարքի օրհնությամբ Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Գեորգյան հոգեւոր ճեմարանի եւ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի միջեւ համագործակցության համաձայնագրի ստորագրման միջոցառումը: Այս առիթով Հայաստան է ժամանել Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի պատվիրակությունը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ուսումնական կոմիտեի նախագահ, ակադեմիայի ռեկտոր Եւգենի արքեպիսկոպոսի գլխավորությամբ:

Հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Գեորգյան հոգեւոր ճեմարանի օրհներգերը: Այնուհետեւ ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեորգ եպս. Սարոյանը. «Հավատով, պատմությամբ, մշակույթով եւ աշխարհընկալմամբ կապված մեր ժողովուրդների հոգեւոր փոխհարաբերությունների դարավոր պատմության մեջ այս օրը հատկանշում է եւս մեկ կարեւոր հանգրվան: ...Մեզ համար առաջնային խնդիր է Եկեղեցու հավատարիմ սպասավորների դաստիարակությունը. հոգեւորականներ, ովքեր իրենց նվիրումով, հավատով եւ հայրենասիրությամբ կնպաստեն մեր

Կարգաշնչում ամփոփիչ դասը

Համաձայնագրի ստորագրում

քրիստոնեական աշխարհի վերածնությանն ու զարգացմանը: Մենք վստահ ենք, որ երկու հաստատությունների միջև այս համաձայնագրի ստորագրությունը կնպաստի ճեմարանների հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը եւ կբացի համագործակցության նոր հորիզոններ», - նշեց Սրբազան Հայրը:

Այս առիթով ներկաներին իր խոսքն ուղղեց Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի տեսուչ Եւգենի արքեպիսկոպոսը՝ համաձայնագրի ստորագրումը կարեւոր քայլ նկատելով երկու եկեղեցիների հարաբերություններում: Նա ընդգծեց երիտասարդների կրթության եւ եկեղեցականների պատրաստության կարեւորությունը՝ անդրադառնալով կրթական բարեփոխումներին, ինչպես նաեւ դրանց իրականացման գործում հոգեւոր ճեմարանների միջև համագործակցության եւ փորձառության փոխանակման անհրաժեշտությանը:

Կրթական հաստատությունների համագործակցության մեկնարկը ողջունեց նաեւ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը: Այնուհետեւ հանդիսավոր կերպով ստորագրվեց համագործակցության համաձայնագիրը:

Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն աստվածաբանական, հումանիտար գիտությունների եւ հոգեւոր կրթության բնագավառներում, ինչպես նաեւ ուսումնական, գիտական, ուսումնամեթոդական եւ տեղեկատվական-հրատարակչական գործունեության համախմբում եւ ջանքերի միավորում՝ ի նպաստ միասնական հումանիտար գիտակրթական տարածքի ընդլայնման: Ստորագրված փաստաթղթով փոխադարձ համաձայնություն ձեռք բերվեց՝ մշակելու եւ ներդնելու համատեղ փոխլրացնող կրթական ծրագրեր, օգտագործելու դասախոսների փորձը՝ նրանց մասնակից դարձնելով համատեղ ուսուցման ծրագրերի մշակմանն ու իրականացմանն առանձին առարկաների կամ կրթական ծրագրերի շրջանակներում: Ծրագրվում է կազմակերպել համատեղ գիտական միջոցառումներ ու գիտահետազոտական ուսումնասիրություններ, ուսումնամեթոդական աշխատանքների բնագավառում՝ փորձի փոխանակում կատարել, նպաստել դասախոսների որակավորման բարձրացմանը, մշակել մանկավարժական տեխնոլոգիաներ: Նաեւ համատեղ հրատարակության կպատրաստվի գիտական ու կրթական գրականություն: Համաձայնագրի ստորագրումից հետո հոգեւոր երգերի կատարումներով հանդես եկան Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախմբերը: Հանդիսությունը փակվեց Մայր Աթոռի Վանական խորհրդի նախագահ եւ Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպ. Հովհաննիսյանի օրհնության խոսքով:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոսական կազմը եւ ուսանողությունը, ՀՀ-ում ՌԴ դեսպանատան խորհրդական Վիկտոր Գրիվոպուսկովը, ՀՀ-ում ՌԴ սահմանապահ զորքերի հրամանատարի առաջին տեղակալ Յուրի Ռադիոնովը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու ուսումնական կոմիտեի նախագահի օգնական գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Գվոզդեւը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Մայիսի 20-ին Մայր Աթոռում գումարվեց Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական-աստվածաբանական խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում քննության առնվեցին միջեկեղեցական, հասարակական եւ ներեկեղեցական տարաբնույթ հարցեր:

Զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը՝ տեղեկացնելով 2013 թ. հուլիս ամսին Բուդապեշտում կայանալիք Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ եւ 2013 թ. նոյեմբեր ամսին Ռուսաստանում կազմակերպվելիք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 11-րդ համաժողովի գումարման մասին: Քննարկվեցին Հայ Եկեղեցու պատվիրակության կազմի, ժողովներում առաջադրված նյութերի վերաբերյալ հարցեր եւ հստակեցվեցին ընդհանուր մոտեցումներ:

Խորհուրդը լսեց նաեւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ եպս. Սարոյանի զեկույցը՝ մայիսի 16-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի միջեւ ստորագրված համաձայնագրի վերաբերյալ: Խորհրդի անդամները ողջունեցին համաձայնագրի ստորագրումը՝ գոհունակություն հայտնելով Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ խորացող համագործակցության առիթով:

Խորհուրդն անդրադարձավ նաեւ օրեր առաջ՝ մայիսի 10-11-ին, Երեւանի Ամերիկյան համալսարանում տեղի ունեցած «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների մոդելները. ժամանակակից միտումներ» միջազգային գիտաժողովին: Արձանագրվեց, որ գիտաժողովի կազմակերպիչների կողմից Մայր Աթոռին գիտաժողովին մասնակցելու պաշտոնական հրավեր չի ուղղվել եւ դատապարտելի համարվեց այս առնչությամբ կազմակերպիչների կողմից ապատեղեկատվության տարածումը: Խորհուրդը նաեւ ապակառուցողական համարեց, որ կազմակերպիչները գիտաժողովի գումարման աշխատանքներում չեն գործակցել Հայ Առաքելական Եկեղեցու հետ, երբ գիտաժողովում ընդգրկված էին նյութեր, որոնք ուղղակիորեն առնչվում են Հայ Եկեղեցուն: Աստվածաբանական խորհուրդն անընդունելի համարեց նաեւ գիտաժողովի ընթացքում հնչեցված միակողմանի գնահատականներն ու ոչ առարկայական տեսակետները, որոնք չեն կարող նպաստել երկրի հոգեւոր-կրոնական կյանքում համերաշխ եւ գործակցային մթնոլորտի ձեւավորմանը եւ լուրջ մարտահրավեր են դառնալու Հայաստանում՝ խղճի ազատության իրավունքի իրացման ճանապարհին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Մայիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի տեղական մարմինների ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանի: Ողջունելով հիմնադրամի տեղական մարմինների ներկայացուցիչների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց ներկաներին: Գնահատանքով անդրադառնալով «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ հիմնադրամի ծառայությունը՝ կոչված Հայրենիքի կյանքի առաջընթացին ու բարօրությանը, մեծ հանձնառություն ու հեռանկարային աշխատանք է պահանջում:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը կարեւորեց Հայ Եկեղեցու առավել չափով ներգրավվածությունը հիմնադրամի աշխատանքներում, ինչը կնպաստի նաեւ ազգային ինքնագիտակցության կերտմանն ու ազգային ոգու արթնացմանը: Վերջում Նորին Սրբությունն արդյունավոր գործունեություն մաղթեց հիմնադրամին: Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ ներկաներին հուզող հարցերին, որոնք առնչվում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայիս վիճակին ու գործունեությանը տարբեր ոլորտներում, Սիրիայի հայ համայնքին եւ Հայաստանում ապաստան գտած սիրիահայ ընտանիքներին Մայր Աթոռի կողմից ցուցաբերված օգնությանը, ինչպես նաեւ ներեկեղեցական եւ միջեկեղեցական տարբեր խնդիրներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ» ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ

Մայիսի 21-25-ը Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում տեղի ունեցավ «Քրիստոնյաների ներկայությունը եւ վկայությունը Մերձավոր Արեւելքում» թեմայով միջազգային համագումար՝ կազմակերպված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Մերձավոր Արեւելքի Եկեղեցիների խորհրդի կողմից: Համագումարին մասնակցեցին շուրջ 200 ներկայացուցիչներ Միջին Արեւելքի, Եւրոպայի, Հյուսիսային Ամերիկայի եւ Աֆրիկայի եկեղեցիներից ու էկումենիկ կազմակերպություններից:

Քննարկումների հիմնական նպատակն էր՝ տարածաշրջանում զարգացումների վերլուծությունը եւ Միջին Արեւելքի երկրներում ստեղծված դրության վերաբերյալ Միջին Արեւելքի Եկեղեցիների, ինչպես նաեւ էկումենիկ ընտանիքի դիրքորոշումների հստակեցումը: Համագումարի մասնակիցներն իրենց մտահոգությունն արտահայտեցին քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ դրսեւորվող բռնությունների եւ տարածաշրջանից քրիստոնյա բնակչության նկատելի արտագաղթի առիթով:

Կոնֆերանսի ավարտին ընդունվեց հռչակագիր, որով կարեւորվեց տարածաշրջանում հանդուրժողականության մթնոլորտի վերականգնումը, կրոնական համայնքների խաղաղ համակեցությունը, ինչպես նաեւ շեշտվեց քրիստոնյա համայնքի պաշտպանության ու պահպանմանն ուղղված տարբեր միջոցների գործադրման անհրաժեշտությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը համագումարին ներկայացնում էին Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպ. Ասատուրյանը, Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը եւ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՍԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Կուրսկի մարզի պատվիրակությանը՝ գլխավորությամբ Կուրսկի մարզի նահանգապետի տեղակալ, ներքին քաղաքականության կոմիտեի նախագահ Լյուդմիլա Գրերենկովայի:

Հանդիպման սկզբում պատվիրակության անդամ, Ռուսաստանի հայերի միության Կուրսկի տարածքային կազմակերպության նախագահ Ալեքսան Կոշտոյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց պատվիրակության անդամներին եւ Հայաստան այցելության նպատակը:

Այնուհետեւ հյուրերի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն ողջունեց Նորին Սրբությունը: Վեհափառ Հայրապետը պատվիրակության անդամներին համառոտ ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմությունը, Խորհրդային միության տարիներին Եկեղեցու կրած դժվարությունները եւ ներկա վիճակը՝ ընդգծելով Եկեղեցու կարեւոր դերը հայ ժողովրդի հոգեւոր, ազգային եւ մշակութային կյանքում: Խոսելով հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամական կապերի ձեւավորման գործում Հայ Եկեղեցու դերակատարության մասին՝ Ամենայն Հայոց Հայրապետը մասնավորապես կարեւորեց երկու ժողովուրդների բազմադարյա ջերմ հարաբերությունների հետագա սերտացումն ու զարգացումը մշակույթի, տնտեսության եւ այլ ոլորտներում:

Անդրադառնալով Ռուսաստանի հայկական համայնքին՝ Վեհափառ Հայրապետն իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց ՌԴ իշխանություններին՝ հայ ժողովրդի զավակների նկատմամբ դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների սերտ կապերին, եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաեւ երիտասարդ սերնդի հոգեւոր դաստիարակության անհրաժեշտությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հանրապետական մաղթանք Մայր Աթոռում

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 28-ին՝ Հանրապետության տոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Սարդարապատի հուշահամալիր, որտեղ ներկա գտնվեց 1918 թ. հերոսամարտին նվիրված հանդիսավոր միջոցառմանը: Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը եւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակ դրեցին Սարդարապատի հուշահամալիրում, որից հետո Նորին Սրբությունն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ Մայիսյան հերոսամարտերում զոհված քաջարի հայորդիների հոգիների հանգստության համար: Նույն օրը Մայր Տաճարում տոնի առիթով կատարվեց Հանրապետական մաղթանք: Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ եկեղեցականաց դասն աղոթեց Հայաստան աշխարհի խաղաղության, բարօրության եւ անսասանության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը, ազատվելով Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդական փեղապահի պարտականություններից, ծառայության է կոչվել Ֆրանսիայի Հայոց թեմում:

Հոգեշնորհ Տ. Զավեն աբեղա Յազիչյանն իր հոգեւոր ծառայությունը կիրականացնի Հնդկահայոց հոգեւոր հովվությունում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Հայ-գերմանական ընկերակցությունը (Գերմանիայի թեմ)
Ջերալդ եւ Փաթրիշիա Թ-ըբանջյանը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Երվանդ Պապայեանը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Հոգեւորականաց համագումարը (Կանադայի թեմ)
Պատգամավորական ժողովը (Կանադայի թեմ)
Տիկնանց Միության համգումարը (Կանադայի թեմ):